

MICHELINE ALBERT, ROBERT BEYLOT, RENÉ-G. COQUIN, BERNARD CUITIER, CHARLES RENOUX, *Christianismes Orientaux: Introduction à l'étude des langues et des littératures*, Introduction par Antoine Guillaumont. — Paris, Les éditions du Cerf, 1993 456 p.

Քրիստոնյա Արևելքի և մատենագրությունների ուսումնասիրության ներածություն:

Արևելաքրիստոնեական եկեղեցիների մատենագրական ժառանգության ուսումնասիրությունը վաղուց ի վեր եղել է հետազոտողների ուշադրության կենտրոնում: Մասնագետների և հետազոտողների նոր սերնդի համար կարիք էր առաջացել ի մի բերել այդ բոլոր ուսումնասիրությունները, ստեղծել ընտրովի մատենագիտություն-ձեռնարկ, որը հնարավորություն կտար ժամանակակից ուսումնասիրողներին ամբողջական պատկերացում ունենալ և նախնական տեղեկանք քաղել արևելաքրիստոնյա ժողովուրդների լեզուների և մատենագրությունների վերաբերյալ: Այդ թեմային նվիրված ընդհանրացնող ձեռնարկներ ժամանակին շրջանառության մեջ են դրել նշանավոր դիտնականներ Կ. Բրոքելմանը, Ժ. Լեյպոլդտը, Ֆ. Ֆինկը, Ե. Լիտմանը¹, Ա. Բաումստարկը², Զ. Ֆուրլանին³, Ա. Գուլլամոնտը, Ժ. Դոբեյսը, Ռ. Շնեյդերը, Լ. Բերբերյանը⁴, Ժ. Ասֆալգը, Գ. Կրյուգերը⁵ և ուրիշներ:

¹ C. Brockelmann, J. Leclercq, F. N. Finck, E. Littmann. *Geschichte der christlichen Literaturen des Orients: Die Literaturen des Ostens in Einzeldarstellungen*, 7, 2, Leipzig, 1907, 2^e éd. 1909.

² A. Baumstark. *Die christlichen Literaturen des Orients*, 2 vol., Leipzig, 1911.

³ G. Furlani, *Littérature dell' Oriente cristiano*, dans G. Tucci (ed.), *Civiltà dell' Oriente*, II, Rome, 1957. p. 191—228.

⁴ A. Guillaumont, J. Doresse, R. Schneider et H. Berberian. *«Christianisme oriental»*, dans R. Queneau (dir.), *Histoire des littératures*, «Bibl. de la Pléiade», I, p. 751—821, Paris, 1955, 2^e éd., 1973.

⁵ J. Assfalg et P. Krüger. *Kleines Wörterbuch des christlichen Orients*, Wies-

baden, 1955 (Ֆրանսիական հրատարակչությունը 1993 թվականին հրատարակել է լեզու հարուստ է ինքնին, դարերի ընթացքում ստեղծած արժեքների բազմազանությամբ, սակայն նրանց մեջ նույնական է մեկ բան՝ բոլորն էլ իրենց զարգացման հիմքում դրել են քրիստոնեական մատենագրության գոհարը՝ Աստվածաշունչը և հայրաբանական գրականությունը: Այս առումով նշված մատենագրությունների և լեզուների հետազոտությունը եվրոպական ուսումնասիրողի համար հետապնդում է միասնական նպատակ:

Արևելյան քրիստոնեական մատենագրություններին նվիրված հետազոտություններ նվիրող աշխատություններ են տեսնում սկսած XVII դարի վերջերից: Սակայն պետք է այստեղ նշել, որ նման ուսումնասիրություններ ավելի ու ավելի հաճախակի են հրապարակվում XX դարի ընթացքում: Այս նյութի ուսումնասիրությանն են նվիրում իրենց էջերը բազմաթիվ պարբերականներ: Ձրանսիացի հետազոտողները իրենց առջև նպատակ են դրել հավաքելով այս նյութի շուրջ ստեղծված գրականությունն ու եվրոպական հանդեսներում կոտակված հոդվածները, ընթերցողին պատկերացում տալ ներկայացված մատենագրությունների զարգացման հիմնական միտումների մասին:

Այս տեսանկյունից շնորհակալ գործ են չատարել արևելաքրիստոնեական մատենագրության հմուտ մասնագետներ Միշելին Ալբերտը, Ռոբեր Բեյլոն, Ռենե-Ժ. Կոքինը, Բեռնար Լուտին և Շառլ Ռենու, որոնք ուսում-

baden, 1955 (Ֆրանսիական հրատարակչությունը. Dictionnaire de l'Orient chrétien-Turnhout, 1991).

⁶ Բավարական միայն ղրանցից մի քանի-ի թվարկումով. *Revue de l'Orient chrétien*, *Oriens Christianus*, *Le Muséon*. *Orientalia Periodica*, *Analecta Bollandiana*.

նասիրողների դատին են հանձնել «Արևելյան քրիստոնեություն». լեզուների և մատենագրությունների ուսումնասիրության ներածություն» հատորը: Առաջարանը գրել է Անտուան Գույոն: Գիրքը հրապարակել է Ֆրանսիայի Գիտական հետազոտությունների ազգային կենտրոնի (CNRS) 25-րդ խումբը, Փարիզի Cerf հրատարակության միջոցով: Ուսումնասիրությունը բաղկացած է վեց մասից, որոնցից լուրաքանչյուրը նվիրված է արևելաքրիստոնեական ժողովուրդների՝ արաբների, հայերի, ղպտիների, եթովպացիների, վրացիների և ասորիների լեզվին և միջնադարյան մատենագրական ժառանգությանը:

Անտուան Գույոն «Քրիստոնեյա Արևելք» առաջարանում անդրադարձել է իր ընտրած լեզուական տերմինի նշանակությանը, ընդգրկման սահմաններին և բովանդակային կապերին: Հեղինակն ընդգծում է, որ Մերձավոր Արևելքում բնակվող այդ ժողովուրդներից շատերին մատենագրություն է պարզեցնել քրիստոնեությունը, իսկ հայերն ու վրացիները կարողացել են ստեղծել նաև սեփական, ինքնատիպ այբուբեն: Հեղինակն անդրադառնում է արևելյան եկեղեցիների պատմության ջրադարձային փուլերին, արձանագրելով, որ բյուզանդական եկեղեցուց բաժանվելուց հետո այդ ժողովուրդների մի մասը կարողացավ պահպանել սեփական ազգային դեմքը, իսկ մյուսները՝ ասորիներն ու ղպտիները, ժամանակի լոնթացքում կորցրեցին ազգային լեզուն և ձուլվեցին արաբների հետ: Ասորական բնակչության ջրաշնույթ ստեղծվեցին մի քանի եկեղեցական կազմակերպություններ և միատարր տնակությունը բաժանվեց մի քանի համայնքների՝ նեստորական, հակոբիկ, մարիոնիտ, մելիտո Գրեթե նույն ճակատագիրն ունեցավ նաև ղպտական եկեղեցին: Հիշատակված բոլոր եկեղեցիների շարքում ամենահզորը այսպես կոչված միաբնակ եկեղեցիներն էին: Նրանց հզորացումը առաջարանի հեղինակը համարում է պատասխան բյուզանդական ճնշմանը, որի քաղաքականության կրողը Արևելքում, այսպես կոչված մելիտո կամ թագավորական եկեղեցին էր: Ալեքսանդրիայի պատրիարքներին համեմատելով եգիպտական փարավոնների հետ, հեղինակը փորձում է բացատրել նրանց ինքնուրույնության ձգտման պատմական հիմքերը: Պտղոմեոսյանների և Սելևկյանների զարավոր բարեկամությանը են բացատրում նաև Անտիոքի և Ալեքսանդրիայի միաբնակ աթոռների լավ փոխհարաբերությունները: Մատնանշում է ընթացիկական եկեղեցու պատմական խորհե պայմանավորված կախումը Ալեքսանդրիայի աթոռից մինչև 1952 թ., երբ ընդվ-

պիայում հաստատվեց ինքնազուխ պատրիարքություն: Ի տարբերություն հակոբիկյանների, ըստ հեղինակի կարծիքի, հայերը միաբնակություն են ընդունել հակադրվելով պարսկական կայսրության մեջ հզորացած նեստորականությանը: Այլ ճանապարհ է որդեգրել վրաց եկեղեցին, որը սկզբում միացած է եղել հայոց եկեղեցու հետ, իսկ VII դարում բաժանվել է նրանից, ընդունելով բյուզանդական երկաթնակ եկեղեցու գերիշխանությունը: Թըվարկված յուրաքանչյուր եկեղեցու պատրիարք փամ կաթողիկոս ոչ միայն հոգևոր հովիվ էր, այլ նաև պաշտպանը և խորհրդանիշը ազգային ինքնուրույնության:

Չնայած հիշատակված եկեղեցական, ազգային, քաղաքական և ծիսական տարբերություններին, քրիստոնեյա արևելքի մատենագրությունը ներկայացնում է մի իրական միասնություն, որը բխում է քրիստոնեության հիմքը կազմող բնագրերից, որոնց ավանդույթը հաճախ սերում էր հունականից, հիմնականում դաժնաբան ազգային լեզվով մատենագրության առաջին դրսևորումը: Բացի այդ քրիստոնեյա արևելքի բոլոր եկեղեցիների կողմից թարգմանվել են Աթանասի, Բարսեղի, երկու Գրեգորիների, Կյուրենցիների և Հովհաննես Ոսկերեանի երկերը: Հետաքրքրական է նաև այն պարագան, որ որոշ հայրաբանական երկեր լիքնորոգվում են մուսուլմանական հիշված եկեղեցական մատենագրություններ: Սակայն քրիստոնեյա արևելքի շփումները չեն սահմանափակվել միայն մատենագրական երկերի փոխանակումով: Բազմաթիվ վայրերում իրար կողքի կառուցվել են եթովպական, ղպտական և ասորական, հայկական և վրացական բազմաթիվ եկեղեցիներ: Հատկապես կենդանի և շատ թործնական են եղել շփումները Ալեքսանդրիայի և Անտիոքի պատրիարքական աթոռների միջև: Չնայած ծիսական որոշակի տարբերություններին, նրանց բոլորի ծիսական տարիքը հիմքում ընկած էր Երուսաղեմյան տոնացությամբ:

Առաջարանից տեղեկանում ենք նաև, որ գրքի ծրագիրը պատկանում է Ռ.—Ժ. Կոքի-նին, սակայն ամեն հեղինակ ազատ է եղել իր նյութի ընտրության մեջ, տիկին Ալեքսանդրիայի տեսական տեսքի է բերել դիրքը, ցանկերը կազմել է Ն. Շաուլ Ռենուին: Արաբական բաժինը խմբագրել է Ժ. Տրուպոն, հայկականը՝ Ժ.—Պ. Մահեն և տիկին Գ. Ուլուհոյանը, ղպտականը՝ Ե. Լուչեզին, եթովպականը Ռ.—Ժ. Կոքին, ասորականը՝ Ս. Պ. Բրոկը և Պ. Զ. դը Հալուն:

Գրքի առաջին մասը կոչվում է «Արար քրիստոնյաների լեզուն և մատենագրությունը», որը հեղինակել է Ռենե—Ժ. Կոքինը, ի տառերկրություն ղպտերենի, եթովպերենի, հայերենի եւ վրացերենի, որոնք շրջանառության մեջ են եղել սահմանափակ աշխարհագրական տարածքում և կիրառվել են հիմնականում սեփական ժողովրդի կողմից, արաբերենը տարածված էր ավելի լայն տարածաշրջանում՝ ծովափնային, Լիբանանում, Ասորիքում և Իրաքում (հիմնականում ղպտիների և ասորիների մեջ)։ Հեղինակը փորձում է զատորոշել քրիստոնյա և մահմեդական արաբերենը, հղում է համապատասխան գրականություն։

Քրիստոնյա արաբական գրականությունն առանձնահատուկ է նրանով, որ սկսած VII դարից դրանով են դրել ղպտի և ասորի եկեղեցական գործիչները, իսկ VII դարից այն գրեթե միակ մատենագրական լեզուն է, որից օգտվում են այդ ժողովուրդները։ Հետաքրքիր է նաև այն պարագան, որ այդ լեզվով են իրենց երկերը շարագրում նաև ծովափնային, Ասորիքում և Պաղեստինում բնակվող բազմաթիվ կաթոլիկ հայ եկեղեցականներ, որոնց Ռենե Կոքինը նվիրում է մի հատուկ հատված (տես էջ 98)։ Աշխատանքում խոսվում է նաև մի շարք ալլ արաբագիր հայ հեղինակների մասին, օրինակ. Աբուսահլ հայի, Այս առումով, մեր կարծիքով, դեռևս իր ասելիքն ունի նաև հայագիտությունը, որի աշխատանքներից մեկն էլ քրիստոնյա արաբական գրականությունը բազմակողմանի ուսումնասիրությունն է և հայագրի մտավորականների ստեղծած երկերի մանրակրկիտ հետազոտությունը։ Հասարակագետների համար լավագույն կարևոր է փոքրամասն լինել այդ երկու թիվ պատմական օրինաչափությունների ուսումնասիրության մեջ։ Պետք է նաև նշել, որ Ռ.—Ժ. Կոքինը հետևում է Գրաֆի հայտնի աշխատությանը⁷ և իր շարադրանքը հասցնում է մինչև XX դար։

Գրքի երկրորդ մասը նվիրված է հայոց մատենագրությանը և լեզվին, այս հատվածի հեղինակն է ճանաչված հայագետ Հ. Շառլ Ռենուն, որն ընդհանուր գծերով բանաձևելով հայոց լեզվի պատմությունն ու թվարկելով առնուհապա հիմնական ձևերն ու քերականությունները, հիշատակում է նաև հայերենի ուսումնասիրության հիմնական բառարաններն ու քրեստոմատիաները։ Մեր կարծիքով աշխատության այս մասը ավելի ամ-

բողջական կլիներ, եթե հեղինակը բառարանների շարքում թվարկեր նաև Ն. Բյուզանգացու հայերեն-ֆրանսերեն, և հատկապես Վենետիկում հրատարակված հունարեն-հայերեն բառարանը, Երբեմն, Շ. Ռենուն միակողմանի մտնեցում է ցուցաբերում կարևորագույն գիտական խնդիրների նկատմամբ, հղելով միայն հակաճառող կողմերից միայն մեկի կարծիքն արտահայտող գրականություն։ Օրինակ, հ. ղի—նակը պնդում է, թե հայերը սերում են Բրաքիայից (այստեղ անգամ չի հիշատակվում ի. Դյակոնովի ռուսերեն աշխատությունը) կամ թե մայրենի լեզվով են խոսում սկսած մ. թ. ա. VI դարից, խնդիրներ, որոնք դեռևս միանշանակ սպասության չունեն։ Իմ կարծիքով լեզվի ուսումնասիրության հատվածը ավելի ամբողջական կլիներ, եթե հիշատակվեին նաև Գր. Ղափանցյանի և Գ. Ջահուկյանի աշխատությունները։

Բնական ենթադրական է նաև հարգելի հեղինակի այն մտնեցումը, որով հայ միջնադարյան մատենագրության էկարագրությունը սկսելով V դարից, ավարտում է Կլիկյան հայկական թագավորության կործանումով։ Նախընտրելի էր միջնադարյան հայ մատենագրության պատմությունը հասցնել մինչև XVIII դար, երբ Մխիթար Սեբաստացին և Նրա հետևորդները հայոց պատմության և մատենագրության գիտական ուսումնասիրության ըսկիզբը դրեցին։

Շ. Ռենուն հիշատակում է հայ մատենագրական երկերին վերաբերող հիմնական մատենագիտական գրականությունը, սակայն նրանց մեջ արժեք հիշատակել նաև հայոց պարբերական մամուլի, հնատիպ գրքի, «Հանդես Ամսօրյայի», «Արարատի», «Եղևիկայի» և Կ. Ավետյանի կազմած, «Արարատում» հրապարակված բնագրերի մատենագիտությունները, իսկ վիճաբերի ուսումնասիրության բաժնում պետք էր հղել նաև Ս. Ավագյանի հետազոտությունները, որոնք հայկական վիճագրի ուսումնասիրության բնագավառում ունեն դասագրքի նշանակություն։ Հիշատակելով հայ ծիսական գրականությունը նվիրված աշխատությունները, հեղինակը չի նշել Նորայր արք. Պողարյանի այդ թեմայով գրած աշխատությունը։

Հարգելի հեղինակը, շնայած իրեն հատկացված տեղի պակասությանը, փորձում է քննական հայացքով նայել հայ մատենագրու-

⁷ G. Graf. Geschichte der christlichen arabischen Literatur, 5 vol. coll. Studi e testi, Cité du Vatican, 1944—1953.

⁸ Ն. Պողարյան. Միսագիտություն. Նյու Յորք, 1990:

թյան մի շարք երկերի Սակայն իմ կարծիքով արդարացված չեն Փավստոսին, Հովհաննես Մանգակունուն, Սերենոսին, Նդիշին տրված 'կեղծ (pseudo) պիտակումները, լուսաբանման կարոտ է մնում Մովսես Խորենացուն մինչև VIII դար տանելը, մանավանդ, որ չեն բերվում այդ հարցերին վերաբերող տարամետ կարծիքները և դրականությունը։ Նույն վերապահումը կարելի է կատարել նաև Նդիշե մատենագրի գործունեության թվագրման խընդրում, ուր չի հղվում անգամ Հ. Ն. Ակինյանի ուսումնասիրությունը։

Հավանաբար տեղի սղության պատճառով հեղինակը չի անդրադարձել նաև հայ մատենագրության աշխարհի գործիչների երկերին, ինչպիսիք են Պողոս Տարոնացին, Հովհաննես Սարկավազը, Գրիգոր Ակնեբցին, Դավիթ Քոռայրեցին, Կոստանդին Նրզնկացին, Մխիթար Սկևռացին, Եսայի Նշեցին, Գրիգոր Տաթևացին և ուրիշներ, որոնք ուրույն ազդեցություն են ունեցել հայ հոգևոր մատենագրության զարգացման վրա։ Արժեք նաև անդրադառնալ հայ թարգմանական մատենագրության զարգացման որոշ միտումներին, վրաց, ասորի, լատին և հույն մատենագրությունների հետ նրա շփումներին։ Իհարկե, հատկացված ծավալի մեջ անհնար էր շոշափել այդ բոլոր խնդիրները։ Հույս ունենք, որ Հ. Շառլ Ռենուն կրկին կանդրադառնա այս հարցերին և ֆրանսիացի ընթերցողի համար կստեղծի հայ մատենագրության պատմության համապարփակ ձեռնարկ։

Գրքի երրորդ մասը նվիրված է զպտիներեն լեզվին և մատենագրությանը, խոսվում է այդ մատենագրության առանձնահատկությունների մասին, ցույց է տրվում, որ Եգիպտոսում, սկսած մ.թ. II դարից մինչև Քաղկեդոնի ժողովը Ալեքսանդրիայի սուրբ հայրերը պարունակում էին հունարեն։ Այս եկեղեցու ծիսակատարությունները մինչև այդ կատարվում էին հունարեն, իսկ դրանից հետո՝ զպտիներեն, այդ պատճառով էլ մինչև Քաղկեդոնի ժողովը ըստ տեղեկության երկերի համար դժվար է պնդել, թե որ լեզվով են դրանք գրվել։ Ուշագրավ է, որ զպտիական գրականության ծաղկումը տեղի է ունենում մինչև XII դարը, իսկ դրանից հետո նկատելի է, որ նրան դադար է փոխարինելու արարքները։

Գրքի չորրորդ մասը նվիրված է եթովպիայի լեզվին և մատենագրությանը։ Ռոբերտ Բեյլուն տեղեկացնում է, որ մինչև X դարը ոչինչ հայտնի չէ եթովպական գրականությունից։ Պահպանված երկերի շարքին կարելի է դասել միայն Աստվածաշունչը և մի շարք ծիսական գրքեր։ Այստեղ հեղինակը րավական

մանրամասներ են խոսում է եթովպական ձեռագրական հավաքածուների և միկրոթապավենների պահպանման մասին։ Իմ կարծիքով հայագիտության առջև ևս կանգնած է բոլոր հայերեն ձեռագրերը լուսանկարելու և մի քանի տեղում պահպանելու խնդիրը։

Գրքից իմանում ենք նաև, որ եթովպական բոլոր աստվածաշնչային գրքերը և պարականոնները մինչև X դարը թարգմանվել են հունարենից։ Սակայն XIV դարից սկսվում է այս գրականության հիմնական վերածնունդը, այս դարաշրջանում քրիստոնեական մատենագրությունը եթովպերեն էր թարգմանվում հիմնականում արաբերենից։

Վրացերեն լեզուն և գրականությունը հատվածը պատկերում է Բենեար Ուտիկի գրչին։ Լեզվիսակը, մանվելով եղած գրականության վրա, ստեղծում է վրաց քրիստոնեական մատենագրության պատմության հիմնական պատկերը, հետևելով Կ. Կեկելիձեի հիմնարար ուսումնասիրությանը։ Այսօր բավական տարօրինակ է հնչում հեղինակի այն պնդումը, ըստ որի եթե Շուշանիկի վկայարանության մեջ հիշատակված են Աստվածաշնչի գրքերը, ապա դրանք հենց այդ ժամանակ պետք է թարգմանված լինեին վրացերեն։ Իհարկե ինքս էլ համոզված եմ, որ վրացերեն Աստվածաշունչը թարգմանված պետք է լինի V դարի II կեսին, նաև այն պետք է նկատի ունենալ, որ Շուշանիկի մայրենին հայերենն էր և նա ու նրա երեցը կարող էին այդ գիրքը ընթերցել նաև հարազատ լեզվով, հատկապես այն դեպքում, երբ հայտնի է, որ մինչև VII դարը Յուդաթում, եկեղեցական ծեսի ժամանակ օգտագործվում էր նաև հայերենը, սովորություն, որի կարգավորումը կապվում է ս. Շառլանիկի անվան հետ։

Գրքի վերջին, վեցերորդ մասը նվիրված է ասորիների ստեղծած գրականությանն ու լեզվին։ Միշելին Արքերը միմյանցից չբաժանելով ասորական գրականության երկու հիմնական ուղղությունները (հսկողական և նեստորական), ներկայացնում է այդ գրականության զարգացման հիմնական միտումները մինչև XIV դարը, խոսում է ասորական Աստվածաշնչի (պեշիտոյի) առանձնահատկությունների մասին։ Ամենաընդհանուր գծերով տրվում է ասորական գրականության պատմությունը, ուր հղվում է ադ հարցը լուսաբանող հիմնական գրականությունը։

Գիրքն ունի նաև հապավված գրականության և անծանոթ բառերի ցանկ, ժամանա-

կազմակերպողական տախտակ, քարտեզներ, Միջնադարյան հեղինակների, տեղանունների, տերմինների ցանկերը մեծ բարեխղճությամբ կազմել է Հ. Շառլ Ռենուն, Հեղինակներն արել են ամեն ինչ, որպեսզի գիրքը լինի ընդգրկող-

իչ, ուսանելի և ավարտուն: Կատարված մի փանի դիտողությունների նպատակն էր հարգարժան հեղինակների ուշադրությունը մեկ անգամ ևս հրավերել հիշատակած խնդիրներին վրա:

Armenia and the Bible: papers presented to the international symposium held at Heidelberg, July 16—19, 1990/edited by Christoph Burckhard. — Scholars Press Atlanta, Georgia, 1993 (University of Pennsylvania. Armenian texts and studies; no 12). 251 p.

Հայաստանը և Աստվածաշունչը. Հայդելբերգի միջազգային գիտաժողովին ներկայացված նյութեր. հուլիսի 16—19, 1990.

ՇՀայկական ուսումնական միջազգային ընկերակցությունը ճանաչված հայագիտական կազմակերպություն է: Այն արդեն 10 տարի շարունակ Սրբազան Հայաստանի պրոֆ. Մայքլ Սթոունի ղեկավարությամբ հովանավորում է հայագիտական բազմաբնույթ հետազոտություններ, ամեն տարի գիտաժողովներ է անցկացնում աշխարհի տարբեր գիտական կենտրոններում և հրապարակում դրանց նյութերը: Մինչև այսօր հրապարակվել է 12 հատոր. դրանք Աստվածաշունչի ոսկեդարյան թարգմանության տարբեր զրգրի գիտական բնագրեր են, միջնադարի հայկական մշակութային ու պատմության ուսումնասիրության խնդիրները քննարկող ժողովածուներ և հայագիտության տարբեր բնագավառներին ներվիրված մենագրություններ:

Այս շարքում առանձն հատուկ է ներկա հատորը, որ ամփոփված են 1990 թ. հուլիսի 16—19-ը Հայդելբերգում տեղի ունեցած ՇՀայաստանը և Աստվածաշունչը գիտաժողովի նյութերը: Գիտաժողովի հովանավորներն են եղել Գերմանական հետազոտությունների ընկերակցությունը (DEG, Բեռլին), Փիլիսոփայության և հումանիտար գիտությունների միջազգային խորհուրդը (C.P.S.I., Փարիզ) և Հայդելբերգի համալսարանի հիմնադրամը: Ժողովածուն խմբագրել և հրատարակության է պատրաստել Հայդելբերգի համալսարանի պրոֆեսոր Քրիստոֆ Բուրխարդը: Հրատարակիչներն այն նվիրել են արեւելագրիստենիական մատենադրությունների նշանավոր մասնագետ, հիշյալ կոնֆերանսի մասնակից Հ. Լուի Լեյուարի (1911—1992) հիշատակին:

Գրքում ներկայացված են հայ բանասիրության և պատմության դրժբ բոլոր ժամանակաշրջանները, հետազոտությունների նյութերը վերաբերում են դասական հայագիտության կարևորագույն բնագավառներին՝ պատ-

մություն, լեզվաբանություն, սոցիոլոգիա, բնագրադիտություն, ձեռագրագիտություն, վիճագրահիտություն, մշակողական գրականություն, մանրակարություն:

Աստվածաշունչի հայերեն թարգմանությունը հետազոտության առարկա է Լուի հայագիտության սկզբնավորման շրջանից ի վեր: Այս առումով հետաքրքիր է Ռուբեն Աղալյանի (Վաշինգտոն) մտալցումը, որն անդամադրում է մեր դարի երկրորդ քառորդում Սրբազան և Փարիզում սկսված, Աստվածաշունչի թարգմանության 1500-ամյակի տոնակատարությանը նվիրված գիտական շարժմանը, որի նախաձեռնողներն էին Թորգոմ պատրիարք Գուշակյանը, Գարեգին առքայակոպոս Հովսեփյանը, Նիկողայոս Աղոնցը, Աշակ Չոպանյանը, Անտուան Մեյեն, Շառլ Դիլլը և ուրիշներ: Հեղինակը արծարծում է այդ գիտաժողովների խթանիչ նշանակությունը, անդրադառնում Աստվածաշունչի հայերեն թարգմանության գիտական արժեքավորման հարցերի նկատմամբ վերահիշյալ հեղինակների մշակած սկզբունքներին:

Ժողովածուի մեջ տեղ են գտել նաև հոգվածներ՝ նվիրված Աստվածաշունչի աշխարհաբար թարգմանություններին (Մանուել Ջինբալյան, Ատրասբուրգ) և 1820—1860-ականներին՝ ամերիկյան միսիոներական շարժմանը Ռուբինյան և Մերձավոր Արևելքում (Բարբարա Մերկերյան, Ուելսլի): Ահա Բուրխարդի (Բեյրութ) հոգվածը վերաբերում է 1987 թ. Լիբանոնում կատարված սոցիոլոգիական հետազոտության արդյունքներին, որոնց հիմամբ հեղինակը քննարկում է լիբանանահայերի բարոյական և կրոնական արժեքները և այդ տարածաշրջանում հայոց եկեղեցու դերը:

Հոգվածների նշանակալի մասը նվիրված է թարգմանությունների թագուհի՝ կոչված Աստվածաշունչի բնագրագիտական խնդիրներին: Այս տեսանկյունից նոր գիտարկումներ են պարու-

նակում Կլոդ Կոքսի (Օնտարիո) և Անդրանիկ Զեյթունյանի (Երևան) հոգվածները Առաջինը փորձում է պարզել, թե V դարում թարգմանված հայերեն Աստվածաշնչի ուսումնասիրության ի՞նչ մեթոդներով կարելի է վերականգնել Ակյուղասի, Սիմաքոսի և Թեոդոտիոսի թարգմանական տարբերությունները, իսկ Անդրանիկ Զեյթունյանը հանգամանորեն անդրադառնում է Մենդոց գրքի հունարեն և հայերեն ձևազրկների տարբերություններին, Հեղինակներին եզրակացությունները հատկապես կարևոր են Աստվածաշնչի հունարեն բնագրի նախնական տեսքի վերականգնման խնդրի շրջանակներում:

Գրքում տեղ գտած հարցերի մի խումբ էլ կապվում է Աստվածաշնչի հայերեն թարգմանության բնագրի ընկալման և զննահատման խնդիրների հետ V—VI դարերում: Ինքնատիպ հարցադրում է կատարել Լուվենի համալսարանի պրոֆեսոր, երջանակահիշատակ հ. Լուի Լեյուարը: Նա հետազոտությունը վերնագրել է՝ «Ինչպե՞ս էին առաջին հայ վանականները ընթերցում Աստվածաշունչը», նյութ քաղելով Եղիշի «Ալլակերպության» ճառից և հայրաբանական երկերից: Դոկտոր Պ. Մուրադյանը (Երևան) իր հոդվածում քննում է հայ և վրաց մատենագրության ու վիժագրության մեջ պահպանված մի շարք փաստական օրինակներ, որոնք հնարավորություն են ընձեռում վերականգնելու աստվածաշնչի այսպես կոչված փոթանակի թարգմանության բնագրի որոշ ընթերցումներ: Շվեյցարացի պրոֆեսոր Ֆուլկեր Զիգերտը իր հրապարակումը նվիրել է Աստվածաշնչի հայկական խմբագրության հետադարձական որակների բացահայտմանը:

Հոդվածների մյուս մասը վերաբերում է Աստվածաշնչի գրքերի միջնադարյան մեկնություններին: Շահն Արքեպիսկոպոս Աճեմյանի (Երուսաղեմ) հրապարակումը քննարկում է «Սաղմոսաց գրքի Դավիթ Անհաղթի ներածությունը», իսկ Մյունխենի համալսարանի պրոֆեսոր Միքայել Վան էսթրոկը հետազոտողների ուշադրություն է հրավիրում Եսայու, 29, 11—12 հատվածի հայերենով պահպանված մի հազվագյուտ մեկնության վրա:

Աստվածաշնչական բազմաթիվ օգտագործման և մեկնման խնդիրների քննարկման են նվիրել իրենց հոդվածները Վուրցբուրգի համալսարանի պրոֆեսոր Փրիստիան Հաննիկը (Աստվածաշնչային մեկնությունները հայկա-

կան ձևազրկների հիշատակարաններում), Հայդելբերգի համալսարանի պրոֆեսոր Ֆրիդրիխ Հեյերը (Աստվածաշնչային հղումները Գրիգոր Նարեկացու 95-րդ ներքողում), Կալիֆոռնիայի համալսարանի պրոֆեսոր Ավետիս Սանջանը (Եսայի Նչեցին և Աստվածաշնչի մեկնությունները), Միլիզանի համալսարանի պրոֆեսոր Արահամ Տերյանը (Աստվածաշունչը Գրիգոր Մազիստրոսի տաղերում) և ֆրանսիական գիտական հետազոտությունների ազգային կենտրոնի աշխատակից Բենար Ուտին (Քուչակույթությունները կովկասյան աստվածաշնչային ձևազրկում)։

Ժամանակակից հայ գրականության մեջ Աստվածաշնչի օգտագործման խնդրին է նվիրված Հալլեի համալսարանի աշխատակից Արմենուհի Դոստ-Արդարյանի հրապարակումը (Աստվածաշունչը ժամանակակից հայ գրականության մեջ. Պարույր Սևակի «Անլուծի Զանգակատուն» երկի օրինակով)։

Դասական և հունարեն հայերենի զարգացման օրինաչափություններին ու պատմական խնդիրներին են նվիրված ՀՀ ԳԱԱ կադեմիկոս Գ. Սարգսյանի (Հայերեն գրական լեզվի նախնական փուլերը պատմաբանի տեսանկյունից) և Լալդենի համալսարանի պրոֆեսոր Հովսեփ Վալտենբերգի («Մեսրոպի լեզուն. հայերենը նրա համար») հոդվածները:

Աստվածաշնչի բնագրերի հետ սերտ աղ'րս ունի նաև միջնադարյան մանրանկարչությունը: Այդ խնդիրների պարզաբանման է վերաբերում Ֆրեդնոյի համալսարանի պրոֆեսոր Տիգրան Գույումճյանի «Հայկական Ավետարանի նկարազարդման զարգացումը. Ձեվավորման դարաշրջան (X—XI դդ.)» հանդամանալի հետազոտությունը:

Ընդգծելով սույն ժողովածուի հիմնական շահեկան լինելը, տարօրինակ է նկատել, որ հայագիտական հոդվածներում հայերեն հղումները և բնագրային հատվածները տրվում են միայն լատինատառ տառադարձությամբ:

Հուսանք, որ խնամքով կազմված այս զրքում տեղ գտած հարցադրումները նոր լիցք իհաղորդեն հայագիտական հետազոտության արժանի են ժողովածուին մասնակցող բոլոր հեղինակները և հատկապես խմբագիր Փրիստոֆ Բուրխարտը:

Ա. Ա. ԲՈՂՈՅԱՆ